եկն երկրորդ անգամ կապել զգործարանն. յորմէ ի սպառ լուծաւ զօրութիւն իմ, մերժեցաւ յինէն կեանք իմ. քաղեցաւ միանգամայն և ոգի իմ, և դառնամ առ այն ուստի առի...» (19):

Ի հեճուկս Թադէոս Երէցին հակառակութեանց, Ոսկանի եղբայրն ու քեռորդին՝ Աւետիս Դլիջենց և Սողոմոն Լեւոնեան կը շարունակեն տպագրական այս կարեւոր ձեռնարկը, օժանդակութեամբ Մկրտիչ Վ. Ջուղայեցիի, Մատթէոս Վանանդեցիի, Պողոս Մանիսացիի և սուրբ Յովհաննէս որդւոյն և Դաւիթ Ոսկեկեռքենցիի։ 1676ին կը հրատարակեն Փոքր Մաշտոցը, և ապա Մեծ Մաշտոցը, Յակոբ Կաթողիկոսին յորդորին համաձայն. յետոյ Նուագարան Կուսին Մարիամու կոչուած գիրքը։ 1679ին կը վերջանայ Ոսկանի սկսած ժամակարգութեան տպագրութիւնը (20)։

Յակոբ Կաթողիկոս չի կրնար, ըստ բաւականի, զօրավիգ կանգնիլ Ոսկանի և անոր յաջորդներուն տպագրական գործին, որովհետև կլանուած էր կաթողիկոսական և պատրիարքական աթոռներու շուրջ յարուցուած խնդիրներով, և անոնց հետեւանքով ճնշուած էր մեծամեծ պարտքերու բեռին տակ։

---

(19) Անդ, 253—255:

(20) Անդ, 255—257. Լեռ, Անդ, 457—462։